ռաք, Սալաչուր, Սիլք, Փերիգոր, Փիրվատ. *ձախից ընդունում է՝* Նիազոմ, Վանքբերդ *եւ* Վանք-Տանար. Թաքմաձոր, Կիվի, Ծամաքլոր, Գոմետքան, Ագարվակ եայլա, Մալակեզ, Փէրիձոր, Կեալս, Խազրան. *անցնում է Տայոց-քար աւանից, ողողելով 5 կիլոմետր երկարութեամբ այգեստանները, իջնում է հարաւ Կրան ամրոցի մօտից եւ Կարատոժի մօտ միանում է Օլթի վտակին։ Այս բոլոր առուակները ողողում են համանուն գեղերը իրենց պարտզաներով, համայն Տայոց-քարի աւազանում։*

Օլթի վտակը Տայոց-քար վտակն ընդունելուց յետոյ ուղղւում է արեւմուտք ընդունելով ձախից՝ Սարսիս-եայլա, Խոձոր, Անգովի, Անգով Փագերի (*աւերակների*), Անգով այրիք-ի (*այրեր*), Գոմէգրէկի, Գինիգոց-ի, Փէրաքիսի, Կեյգիրի, Իձաձորի [1], Դիւաձորի, Ասփակի, Վոսխիանի

կագրութեան 1913 թ. մատեանում եւ թէ քարտէզներում միանման է տպագրուած. Իթթախուրը պիտի լինի ժողովրդի ասութեամբ Ծրիցախոռ։ Սրա մօտ է մի բերդ, իր պատմական շինուածքներով, սրբատաշ քարերով եւ կրով. աւելի ցածը մի մեծ տաճար։ Բերդը ունի աշտարակների հետքեր, մեծ տաճար եւ դղեակներ, որոնց փլրանքն են մնացել։

[1] Իծաձորին թէեւ Իրիցաձոր էլ են անուանում. բայց ինչպէս երեւում է սա առանց փաստի ենթադրութիւն է։ Հրաշալի որս կայ ինչպէս Փանազկերտի, նոյնպէս Տայոց-քարի աւազանի ձորերում եւ անտառներում։ Միեւնոյնը շարունակւում է Անգով ձորում, որի մէջն է